# Աննա Բաբուջյան

## Խիղճ, դու չմեռնես

Կյանքի այս խառնակ հարապտույտում

Հաղթում է միայն ծեր ժամանակը,

Ու ինքը խիղճը, որ ինչքան խաչվում

Հոգու մեջ կրկին է հարություն առնում:

Հաղթում է միայն խիղճն այն ամբասիր

( Խիղճը խեղճություն համարող լսի'ր)

Հաղթում է խիղճը, ով որբի լացից կծկվել գիտի

Ով կույրի աչքի արցունքը սրբել ու լացել գիտի:

Խիղճը, որ խղճալ, կարեկցել գիտի

Խիղճը, որ երբեք մեռնել չգիտի ,

Ինչքան էլ խաչեն, հարություն կառնի

Որքան քարկոծեն, նորեն կկոփվի:

Թե խիղճդ ծախես, էլ ի՞նչ հաղթանակ

Մարդն առանց խղճի գազան է, ստահակ,

Բարությամբ սնի'ր քո խիղճն ու հոգին

Ժպիտ պարգևիր քեզ ճանաչողին:

Կյանքն ի՞նչ է, մի թել, որ բարակում է

Հելյունը դարձիր այս ժանտ աշխարհի,

Քանդիր կծիկը խառնիճաղանջի

Գործիր մի աշխարհ , որտեղ հոգի կա, ուր

ԽԻՂՃՆ Է ԱՊՐՈՒՄ:

14.05.2024

ԱԽՈՒՐՅԱՆ